# <u>Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 49</u>

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի ՆԻՍՏԻ**

***ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ***
***ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ***
***ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ***
***ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ***

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Ա. Դատումյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բադալյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Ներսիսյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

**<u>Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը</u>**

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 15.05.2024թ. N 56-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 11.06.2024թ. N 66-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

5. Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

6. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության «Աշտարակի ուսումնական տեխնոլոգիական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

7. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

8. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու և Աշտարակ համայնքի ավագանու 11.05.2022թ. թիվ 69-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

9. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության «Աշտարակ համայնքի Ուշիի թիվ 20 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/*

10. «Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 146-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/*

11. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

*/Զեկուցող՝ Գ. Ափոմյան/*

12. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Աղձք և Արուճ բնակավայրերում հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

13. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների և ջրավազանի կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

14. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 155-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

15. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*

16. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը սահմանելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն - 2* - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, ի գիտություն ընդունել 2025 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը.

| | ***Վարչական բյուջե*** | ***Ֆոնդային բյուջե*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 1192010.1 | 283670.7 | 1475680.8 |
| Ծախսային մաս | 697793.6 | 37732.7 | 735526.3 |

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 3* - *«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 15.05.2024թ. N 56-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը /ՄԺԾԾ/ շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 4* - *«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 11.06.2024թ. N 66-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2025 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 11.06.2024թ. N 66-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Աշտարակ համայնքի «Աշտարակ քաղաքի թիվ 1 Մանուշակ մանկապարտեզ», «Աշտարակ քաղաքի թիվ 5 Արաքս Մուրադյանի անվան մանկապարտեզ» և «Աշտարակ համայնքի Կոշի թիվ 17 Կվաշ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների շենքերի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի «Աշտարակ քաղաքի թիվ 2 Արևիկ մանկապարտեզ» և «Օշականի թիվ 9 Գայանե մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Ագարակ, Ավան, Արուճ, Բազմաղբյուր և Նոր Եդեսիա բնակավայրերում նոր մանկապարտեզի շենքերի կառուցման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աղձք, Բյուրական, Ոսկեվազ, Օհանավան, Ուշի և Սասունիկ բնակավայրերի մշակույթի տան շենքերի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի «Կոշի արվեստի դպրոց» ՀՈԱԿ շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ քաղաքի Խաչատուր Աբովյան փողոցի հիմնանորոգում, բնական քարով սալարկում, խճապատում՝ համալիր բարեկարգման միջոցառումների իրականացում», «Աշտարակ քաղաքի կախովի կամուրջի հիմնանորոգում, դեպի կամուրջ տանող աստիճանների, լուսավորության համակարգի վերանորոգում և

տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի «Աշտարակ քաղաքի թվով 7 և Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի թվով 6 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 3 Հովիկ մանկապարտեզի շենքի վերակառուցման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի մշակույթի տան շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում» (այսուհետ' ծրագրեր) թվով՝ 10 սուբվենցիայի հայտերին' համաձայն հավելվածի:»:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 5</u> - Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով «Արագածոտն» ՋՕԸ-ի գործադիր տնօրենի 05.05.2025թ. N 167 գրությունը և Մնացական Բադալյանի 02.04.2025թ. թիվ 3849 դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Ուջան և Արուճ բնակավայրերի վթարային վիճակում գտնվող ջրատարները վերականգնելու նպատակով «Արագածոտն» ՋՕԸ-ին 1 400 000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեհատ բնակավայրի 4-րդ փ., 4 նրբ., 2 փկղ. թիվ 6 տան բնակիչ Մնացական Լյուդվիկի Բադալյանին գազաֆիկացման աշխատանքների համար 1 200 000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Գ. Արշակյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 6* - *Աշտարակի համայնքապետարանի ենթակայության «Աշտարակի ուսումնական տեխնոլոգիական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով.

1. Ստեղծել «Աշտարակի ուսումնական տեխնոլոգիական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «Աշտարակի ուսումնական տեխնոլոգիական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի 1-ի:
3. Հաստատել համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 2-ի:
4. «Աշտարակի ուսումնական տեխնոլոգիական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան երեխաների և դեռահասների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ստեղծումն է ժամանակակից տեխնոլոգիական միջոցներով:
5. «Աշտարակի ուսումնական տեխնոլոգիական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրակցել մարզ Արագածոտն, համայնք Կարբի 4-րդ փողոց թիվ 1 հանրախանութ հասցեի անշարժ գույքը:
6. Ապահովել «Աշտարակի ուսումնական տեխնոլոգիական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հաշվառումն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 7* - *Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի

քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող Երզնկա բնակավայրում գտնվող անշարժ գույքից (հասցե՝ Արագածոտնի մարզ, գ.Նոր Երզնկա, անշարժ գույքի սեփ. վկ.՝ N 533659, տրվ. 14.05.2002թ.) 152,8մ$^2$ տարածքը 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով Մանկական զարգացման հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 01845834) կողմից ստեղծված տեղահանված երեխաներին և խնամակալներին սոցիալ-հոգեբանական աջակցություն մատուցող կենտրոնին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու և Աշտարակ համայնքի ավագանու 11.05.2022թ. թիվ 69-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Սոցիալական աջակցության մասին» օրենքների պահանջներով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, սահմանել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման նոր կարգը՝ համաձայն հավելվածի:

Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

Ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 11.05.2022թ. թիվ 69-Ա որոշումը:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *Աշտարակի համայնքապետարանի ենթակայության «Աշտարակ համայնքի Ուշիի թիվ 20 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով ստեղծել «Աշտարակ համայնքի Ուշիի թիվ 20 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

1. Հաստատել «Աշտարակ համայնքի Ուշիի թիվ 20 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի 1-ի:

2. Հաստատել համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 2-ի:

3. «Աշտարակ համայնքի Ուշիի թիվ 20 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու կամ նախադպրոցական ծառայություններ մատուցելու միջոցով, նպատակը՝ յուրաքանչյուր սանի տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

4. «Աշտարակ համայնքի Ուշիի թիվ 20 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրակցել մարզ Արագածոտն, համայնք գ. Ուշի 4-րդ փողոց թիվ 3 հասցեի անշարժ գույքը:

5. Ապահովել «Աշտարակ համայնքի Ուշիի թիվ 20 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հաշվառումն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 10* - *«Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 146-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, «Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 146-Ա որոշման հավելված 1-18-ը շարադրել նոր խմբագրությամբ:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 11* - *Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող ՊԻԿԱՊ մակնիշի 592 CZ 61 համարանիշի /տիպարը՝ UAZ 23632-159-01, VIN XTT236320R1015189/ բեռնաուղևորատար ավտոմեքենան անհատույց օգտագործման իրավունքով Աշտարակ համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող գույքերն /զարդարանքի պարագաներ - 253 հատ, պողպատյա հենասյուներ - 401 հատ, արգելապատնեշներ - 44 հատ/ անհատույց

օգտագործման իրավունքով Աշտարակ համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 12* - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Աղձք և Արուճ բնակավայրերում հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 26.03.2025թ. N 2/փ-110, 28.03.2025թ. N 2/փ-114 և 04.04.2025թ. N 2/փ-122 դրական եզրակացությունները՝ Աշտարակ քաղաքում, Աղձք և Արուճ բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի Արուճ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 02-022-0028-0010 ծածկագրով 0,0829հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, էներգետիկայի հողեր գործառնական նշանակության փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Աղձք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-008-0132 ծածկագրից 0,00401հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

3. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-001-0596-0201 ծածկագրով 0,05հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 13</u> - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների և ջրավազանի կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Դավիթ Հակոբյանի 11.03.2025թ. N 2689, Նաիրի Սարգսյանի 01.04.2025թ. N 3744, Գագիկ Խաչատրյանի ներկայացուցիչ Զավեն Մուրադյանի 01.04.2025թ. N 3748, Վահան Բարսեղյանի ներկայացուցիչ Արթուր Բարսեղյանի 10.04.2025թ. N 4224, «ՊԵՆՆԻԼԵՅՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Կարեն Ամպարջյանի 11.04.2025թ. N 4305, Գևորգ Մինասյանի 16.04.2025թ. N 4526, «ԿԱ ԱԳՐԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Մաթևոսյանի 17.04.2025թ. N 4622, Ավագ Օհանյանի ներկայացուցիչ Ազատ Հովհաննիսյանի 23.04.2025թ. N 4856, Արսեն Կագանյանի ներկայացուցիչ Արփի Մարտիրոսյանի 28.04.2025թ. N 4980 և 4981, Հենրիկ Սարգսյանի 29.04.2025թ. N 5051՝ արտադրական նշանակության շենք-շինությունների և ջրային օբյեկտի կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.

1. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0452-0016 ծածկագրով, Դավիթ Վարուժանի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 0,47719հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /հնդավոր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային

տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայրի 02-017-0160-0281 ծածկագրով, Հենրիկ Սարգսի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 2,17693հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը ջրային հողեր նպատակային նշանակության՝ /ոռոգման նպատակով ջրավազանի և պոմպակայանի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրի 02-020-0122-0028 ծածկագրով, Արտյոմ Լյուդվիգի Ղազարյանին և Նաիրի Սուրիկի Սարգսյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող 1,0182հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /գյուղ. արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0644-0002 և 02-001-0644-0029 ծածկագրերով, Արսեն Մուշեղի Կագանյանին սեփականության իրավունքով պատկանող 0,5094հա ընդհանուր մակերեսով, միավորվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի /0,46հա-հնդավոր և 0,0494հա-այլ հողատեսք/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /գյուղ. արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

5. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի 02-058-0124-0078 ծածկագրով, Գագիկ Նորիկի Խաչատրյանին և Ռիտա Վազգենի Խաչատրյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,19հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ

գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

6. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0663-0037 ծածկագրով, Վահան Ժորայի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 0,2497հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /արոտավայր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնապահական տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

7. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ագարակ բնակավայրի 02-004-0209-0244 ծածկագրով, «ՊԵՆՆԻԼԵՅՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,90399հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

8. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի 02-058-0067-0035 ծածկագրով, Գևորգ Հակոբի Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող 0,08538հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /հնդավոր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /գյուղ. արտադրանք վերամշակող տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

9. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի 02-058-0336-0039 ծածկագրից, «ԿԱ ԱԳՐԻ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,9194հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական

նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

10. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0354-0002 ծածկագրով, Սիրանուշ Սարգսյանին, Ավագ, Արմինե և Արմեն Օհանյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0,22հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /խաղողի այգի/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 14* - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 155-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 27.03.2025թ. N Կ-27032025-02-0160 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2024թ. N 155-Ա որոշման 2-րդ հավելվածի 29-րդ տողում կատարել լրացում.

«Աշտարակ համայնքի Ագարակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող /ծածկագիր՝ 02-004-0224-0048/, բնակավայրերի նպատակային նշանակության 0,0425հա մակերեսով այլ հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման մրցույթի պահանջներում լրացնել ***«հողամասը տրամադրվում է ծառատնկման և կանաչապատման նպատակով՝ առանց կառուցապատման իրավունքի»*** պայմանը:»:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

Լ Ս Ե Ց Ի Ն – 15 - *Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Մանուշակ Հովհաննիսյանի լիազորված անձ Արտյոմ Աբիսողոմոնյանի 21.04.2025թ. N 4732 դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 02-110-0155-0112 ծածկագրով 0,11հա հողամասը /այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով՝ 4 400 000 /չորս միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող 02-110-0155-0084 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի սեփականատեր Մանուշակ Վարանցովի Հովհաննիսյանին:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

Լ Ս Ե Ց Ի Ն – 16 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի հունիսի 9-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

**18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:***

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2025 թվականի մայիսի 8-ին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ________________ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ________________ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ________________ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ________________ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ________________ |
| ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ | ________________ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ________________ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ________________ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ________________ |
| ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ | ________________ |
| ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ | ________________ |
| ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ | ________________ |
| ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ | ________________ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ________________ |
| ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ | ________________ |
| ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ | ________________ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ________________ |
| ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ | ________________ |
| ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | ________________ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ